

измерительные приборы и робототехника, электротехника, точные и сверхточные приборы, полупроводники и автоматические станки, ювелирная, фармацевтическая промышленность и т.д.);

5. посредством гибкой инвестиционной политики ускоренному развитию тех отраслей промышленности, которые, наряду со стратегическими требованиями экспорта, на базе создания новых циклов промышленной переработки местного сырья, удовлетворят потребительский спрос и обеспечат повышение экономической активности населения республики;

6. созданию условий для расширения сферы квалифицированного ручного труда, стимулирующих функционирование рыночных структур кооперативов, частного предпринимательства, смешанных и малых предприятий (вплоть до нескольких рабочих мест), а также, обеспечив соответствующие правовые гарантии их беспрепятственной жизнедеятельности, осуществлению четкой и гибкой налоговой политики;

7. посредством экономических рычагов развитию таких предприятий различных форм собственности, которые, наряду с расширением сферы занятости, будут стимулировать повышение эффективности использования рабочей силы. Особое внимание следует уделять развитию ремесел как в городах, так и сельских поселениях. При этом следует учитывать, что сегодня значительная часть ремесленников не подвергается статистическому и налоговому учету.

8. за счет средств, поступающих в государственный бюджет от сельского хозяйства, организации производства малых сельхозмашин. Учитывая невысокую степень риска и быстрое возмещение инвестиций в этой подотрасли машиностроения, задача вполне выполнима. Однако речь должна идти о производстве такой техники, которая, с одной стороны, была бы доступна сельским жителям, а с другой – пригодна для эксплуатации в условиях горного рельефа (малая площадь наделов, крутые склоны);

9. с помощью льгот созданию в малых городах и сельских районах (в частности, приграничном поясе и зоне бедствия) агропромышленных комплексов и малых предприятий по переработке всех видов сельскохозяйственной продукции, особенно имеющей экспортное значение (производство молока, голландского, швейцарского сыра, сыров "Лори", "Рокфор", коньяка, вин, эфирных масел из герани и падуба, томатной пасты и сока, фруктовых соков, компотов и др.). Напротив, посредством ограничительных мер в рамках кредитной, налоговой и административной политики необходимо препятствовать строительству предприятий по переработке сельскохозяйственного сырья в крупных и средних городах;

10. в небольших городах и городах-спутниках с целью создания малых предприятий, наряду с предоставлением предпринимателям по возможности больших льгот через инвестиционную политику формированию развитой инфраструктуры. Причем для активизации вывода малых промышленных предприятий из зоны крупных городов в пригороды целесообразно в качестве меры наказания использовать угрозу лишения кредита;

11. в XXI веке при расширении городов и строительстве новых предприятий, жизненно важной является проблема охраны окружающей среды, чистоты воздуха и атмосферы. Для охраны здоровья важным является строительство вредных промышленных предприятий по возможности вдали от жилых кварталов. Необходимо посредством экономических рычагов задуматься об облегчении промышленного бремени города Еревана, стимулировать строительство промышленных предприятий в сельских районах и малых городах. При проектировании плана городов необходимо учитывать их перспективное развитие, в разрезе 50-100 лет с тем, чтобы построенные в наши дни предприятия в будущем также не оказались в черте жилых кварталов городов. В решении этого вопроса важная роль принадлежит государству;

12. в этом отношении необходимо стимулировать и на законодательной основе предоставить определенные привилегии предпринимателям, содействующим созданию благоприятных условий труда в малых городах, развитию системы коммуникаций и транспортной сети. В таких условиях эти города будут притягивать как сельскую, так и городскую (в крупных городах) молодежь, вступающую в трудоспособный возраст, что, в свою очередь, смягчит эмиграцию населения, а также будет способствовать повышению жизненного уровня населения, активизации его воспроизводительной функции.

ՄԵՐՈՒԺԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ասպիրանտ, կրտսեր գիտաշխատող

ՏՆԱՅԻՆ ՆՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ, ԾԱԽՍԵՐԸ ԵՎ ՄՊԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒ

Բնակչության կենսամակարդակն ուսումնասիրող վիճակագրության ճյուղերից մեկը բնակչության տնային տնտեսությունների վիճակագրությունն է: Անցման շրջանում բնակչության կենսամակարդակի ուսումնասիրման և աղքատության չափերի ու կառուցվածքի բացահայտման նպատակով ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցությամբ անց է կացրել տնային տնտեսությունների երեք հետազոտություն: Առաջինը՝ 1996թ. նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 15-ը, ընտրանքային ամբողջությունը՝ 5040 տնային տնտեսություն (փաստացի հետազոտվել է 4920), երկրորդը՝ 1998թ. հուլիսի 1-ից մինչև 1999թ. հունիսի 30-ը, ընտրանքային ամբողջությունը՝ 3600 տնային տնտեսություն: Երկու դեպքում էլ կազմվել է ինքնակշռման ընտրանք, ընդգրկելով հանրապետության ողջ տարածքը՝ ըստ որի բոլոր տնային

տնտեսություններն ունեին ընտրանքում ընդգրկվելու հավասար հավանականություն: Երրորդ հետազոտությունն անցկացվել է 2004թ.-ին¹:

2001թ., 2002թ. և 2003թ., կիրառելով Համաշխարհային բանկի մեթոդաբանությունը, անց են կացվել տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտություններ համապատասխանաբար, 4037, 4634 և 4641 տնային տնտեսություններում:

Համաշխարհային Բանկի ֆինանսական աջակցությամբ 2004թ. ապրիլի 1-ից 2005թ. մարտի 31-ը անց է կացվել 6816 տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտություն: Ընտրանքը շերտավորված էր ըստ մարզերի և կազմված 2001թ. մարդահամարի հասցեների բազայի հիման վրա:

2005թ. հետազոտվել է 5187 տնային տնտեսություն, ընդ որում, ինչպես 2004 թվականին, կիրառվել է ըստ մարզերի շերտավորված ընտրանք: ՀՀ ԱԿՂ-ի կողմից տնային տնտեսությունը սահմանվում է որպես մեկ անձ կամ անձանց խումբ, որոնց համար ընդհանուր է բյուջեն և բնակվելու վայրը: Ընդ որում, բարեկամական կապերը պարտադիր չեն համարվում:

Տնային տնտեսությունների սպառողական ծախսերը սննդի, ոչ պարենային ապրանքների և ակոհոլային խմիչքների գնման վրա կատարված դրամական ծախսերն են, ինչպես նաև ծառայության դիմաց կատարված վճարները:

Եկամուտների կենտրոնացման գործակիցը (Ջինիի ինդեքսը) բնակչության եկամուտների բաշխման փաստացի ծավալի շեղումն է դրանց հավասարաչափ բաշխման գծից: Հավասարաչափ բաշխման դեպքում այն հավասար է զրոյի, բացարձակ անհավասարության պայմաններում այն հավասար է մեկի:

Սպառման ագրեգացված ցուցանիշն օգտագործվում է Հայաստանում բարեկեցության մակարդակը գնահատելու համար: Ենթադրվում է, որ հարցման ժամանակ սպառման մասին տեղեկատվությունն ավելի լավ է գրանցվում՝ և որ սպառումն այնքան էլ զգալուն չէ կարճատև տատանումների նկատմամբ, քան եկամտի ցուցանիշը՝ հատկապես անցումային տնտեսությամբ երկրներում: Սպառման ագրեգացված ցուցանիշը հաշվարկվում է տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հիման վրա և ներառում է հետևյալ բաղկացուցիչները.

- սպառված պարենային և ոչ պարենային ապրանքների արժեքը, ներառյալ սեփական արտադրության ապրանքները, մարդասիրական կազմակերպություններից և այլ աղբյուրներից ստացված օգնությունը
- երկարատև օգտագործման ապրանքների հաշվարկային արժեքը:

- Երկարատև օգտագործման ապրանքների հաշվարկային արժեքը:

Սպառողները գնահատվում է մեկ չափահաս անձի հաշվով: Աղքատության ցուցանիշները հաշվարկվում են՝ օգտագործելով 2004թ.-ի նվազագույն պարենային զանրյուղը և 2004թ.-ին գնահատված ոչ պարենային ապրանքների մասնաբաժինը: Աղքատության գծերը ճշգրտվում են գնաճը հաշվի առած:

Աղքատ համարվում են նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության ընդհանուր գծից, իսկ շատ աղքատ կամ ծայրահեղ աղքատ համարվում են նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել պարենային (կամ ծայրահեղ) աղքատության գծից: 1998/99թ.-ին աղքատության ընդհանուր և պարենային գծերն արտահայտված մեկ չափահաս անձի հաշվով մեկ ամսվա համար կազմել են 17663 և 11210 դրամ:

2000թ.-ին աղբատուրյան ընդհանուր և պարենային գծերը, համապատասխանաբար, կազմել են 19373 և 12467 տոննա:

Աղքատության խորության 7.4% գնահատականը ցույց է տալիս, որ եթե երկիրը հնարավորություն ունենար յուրաքանչյուր անհատի հաշվով (և՛ աղքատ և՛ ոչ աղքատ) համախմբելու աղքատության գծի 7.4 տոկոսին համարժեք ռեսուրսներ և եթե այդ ռեսուրսները հատկացվեին աղքատներին, ապա աղքատությունը, տեսականորեն կվերացվեր, ենթադրելով, որ աղքատներին ուղղված աջակցությունն ամբողջությամբ հատկացվում է աղքատներին: Եթե հաշվարկվում է միայն աղքատ բնակչության հաշվով, ապա աղքատության խորությունը ցույց է տալիս աղքատության պակասությունը, այսինքն՝ այն ցույց է տալիս, թե որքանով է աղքատների միջին եկամուտը (կամ սպառումը) ցածր աղքատության գծից: Աղքատության սրությունը ցույց է տալիս աղքատների միջև եղած անհավասարությունը. այն հաշվի է առնում, որ որոշ աղքատների սպառումը շատ է հեռու աղքատության գծից, իսկ որոշ աղքատների սպառումը շատ է մոտ աղքատության գծին:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները՝ տնային տնտեսությունների զգալի մասի ընթացիկ եկամուտների ցածր մակարդակը վերջին տարիներին հանգեցրել է այնպիսի «եկամուտների աղբյուրի» ի հայտ գալուն ու տեսակարար կշռի ընդլայնմանը, ինչպիսին սեփականության ու արժեքավոր իրերի վաճառքից ստացված մուտքերն են: Տնային տնտեսությունների եկամուտների մասին լրացուցիչ տեղեկություններ են պարունակում դրանց բյուջեների հետազոտությունները: Ըստ մախկին ՀՀ վիճակաբարության կողմից՝ ՀՔ աջակցությամբ 1996թ. անցկացված (նոյեմբեր-դեկտեմբերին, ավելի քան 5000 տնային տնտեսություններում) հետազոտության արդյունքների, համախառն եկամուտների 36.2%¹-ը գոյացել է հենց այս «աղբյուրից»: Այս եկամուտների տեսակարար կշիռը հետագայում զգալի չափով նվազել է. 1997թ. երկրորդ կիսամյակում այն կազմել է 13.9%, իսկ 1998թ. առաջին կիսամյակում՝ 11.7% (գնահատումը կատարված է ՀՀ վիճակաբարության կողմից՝ 1000 տնային տնտեսությունների դիտարկման արդյունքում, աղյուսակ 1), ինչը մատնանշում է, որ ծախսերի հետ մեկտեղ ավելացել են նաև ընթացիկ եկամուտները:

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2006, էջ 89:

² Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2006, էջ 91:

Տնային տնտեսությունների եկամուտների կառուցվածքը¹ (մեկ շնչի հաշվով, %)

	ՀՀ վիճակ. / ՀԲ հետազոտություն		ՀՀ վիճակաբարության հետազոտություններ			
	1996թ. նոյեմբեր-դեկտեմբեր		1997թ. երկրորդ կիսամյակ		1998թ. առաջին կիսամյակ	
	բաժին ընթացիկ եկամուտ- ների մեջ	բաժին համախառն եկամուտների մեջ	բաժին ընթացիկ եկամուտ- ների մեջ	բաժին համախառն եկամուտ- ների մեջ	բաժին ընթացիկ եկամուտ- ների մեջ	բաժին համախառն եկամուտ- ների մեջ
Համախառն եկամուտներ		100		100		100
Ընթացիկ եկամուտներ, այդ թվում՝	100	63.8	100	86.2	100	88.3
Հիմնական եկամուտներ, ներառյալ՝	54.9	35.0	67.1	57.9	61.3	54.1
վարձու աշխատանքից	11.0	7.0	22.4	11.3	29.8	26.3
ինքնագրավածությունից	12.3	7.8	21.7	18.7	20.2	17.8
գյուղատնտեսության վաճառքից	28.1	17.9	21.7	18.7	10.4	9.2
սեփականությունից	3.5	2.2	1.3	1.1	0.9	0.8
Լրացուցիչ եկամուտներ, ներառյալ՝	45.1	28.8	32.9	28.3	38.7	34.2
պետական նպաստներ	6.7	4.3	8.3	7.2	10.6	9.4
տրանսֆերտներ	38.5	24.6	24.5	21.1	28.1	24.8
Այլ «եկամուտներ» (արժեքավոր իրերի վաճառք, փոխառություններ և այլն)		36.2		13.9		11.7

Տնային տնտեսությունների պարբերական դիտարկումները տեղեկություններ են տալիս մաս եկամուտների բաշխման մասին: Ըստ վերը հիշատակված հետազոտությունների արդյունքների, բնակչության ամենաաղքատ 10%-ի և ամենահարուստ 10%-ի եկամուտների շեղումը 1997թ. երկրորդ և 1998թ. առաջին կեսերին կազմել է համապատասխանաբար 27.4 և 23 անգամ, մինչդեռ 1989թ. այն ընդամենը կազմել է 6.7 անգամ: Այնուհանդերձ, 1998թ. ընթացքում եկամուտների տարբերակումը որոշ չափով նվազել է: Բնակչության դրամական եկամուտների տարբերական ամփոփ ցուցիչը՝ Ջինի գործակիցը ևս նվազել է՝ 1996թ. 0.602-ից մինչև 1997թ. երկրորդ կիսամյակի 0.422-ը: Այս տվյալները պետք է ընդունել որոշ վերապահումներով, նկատի առնելով հատկապես բարձր եկամուտները թաքցնելու որոշ մարդկանց հակվածությունը:

Կատարված ուսումնասիրությունները, ինչպես մաս կանոնավոր վիճակագրական տվյալները տեղեկություններ են պարունակում մաս տնային տնտեսությունների ծախսերի կառուցվածքի մասին: Սննդամթերքի վրա կատարված ծախսերը կլանում են եկամուտների չափազանց մեծ մասը (աղյուսակ 2). 1997թ. երկրորդ և 1998թ. առաջին կիսամյակներում սննդամթերքի ձեռքբերման համար ուղղվել են ընթացիկ բոլոր ծախսերի համապատասխանաբար 64.6% և 71.3%-ը (համեմատության համար՝ 1991թ. այն կազմել է 54%, իսկ 1994թ.՝ 65%), արդյունաբերական ապրանքների ձեռք բերման համար ծախսերի կատարման բաժինը 1998թ. առաջին կիսամյակում նվազել է, հասնելով մոտ 10%-ի (1991թ.-ն 27% և 1994թ.-ն՝ 21%):

Համաձայն հրապարակված վիճակագրական տվյալների 1998թ.-ին ապրանքների ու ծառայությունների ձեռք բերման և պարտադիր վճարների համար կատարված ծախսերին բաժին են ընկել ընթացիկ եկամուտների մոտ 92%-ը (1992թ.՝ 64.4% և 1996թ.՝ 86.6%): 1996-1999թթ. գրանցվել է այդ ծախսերի բաժնի նվազում (77.3%՝ 1998թ. առաջին եռամսյակի 87.6 %-ի դիմաց):

Տնային տնտեսությունների ծախսերի կառուցվածքը² (մեկ շնչի հաշվով, %)

	ՀՀ վիճակ. / ՀԲ հետազոտություն		ՀՀ վիճակաբարության հետազոտություններ			
	1996թ. նոյեմբեր-դեկտեմբեր		1997թ. երկրորդ կիսամյակ		1998թ. առաջին կիսամյակ	
	բաժին ընթացիկ եկամուտ- ների մեջ	բաժին համախառն եկամուտ- ների մեջ	բաժին ընթացիկ եկամուտ- ների մեջ	բաժին համախառն եկամուտ- ների մեջ	բաժին ընթացիկ եկամուտ- ների մեջ	բաժին համախառն եկամուտ- ների մեջ
Ընթացիկ ծախսեր, այդ թվում՝	100	147.6	100	111.5	100	...
Սննդամթերք, ըմպելիք և ծխախոտ	53.5	79.0	64.6	72.0	71.3	...
որից՝ ծխախոտ	2.0	3.0	3.3	3.7	3.8	...
Արդյունաբերական ապրանքներ	17.9	26.4	14.9	16.6	10.1	...
Ծառայություններ, այդ թվում՝	28.6	42.2	20.5	22.9	18.6	...
բնակ.-կոմունալ (ծառայութ. մեջ, %)			35.9	8.2	39.1	...
էլեկտրաէներգիա (բնակ. ծառայ. մեջ, %)			56.8	4.7	81.3	...

1998թ. առաջին կիսամյակում կրճատվել է մաս ծառայությունների համար կատարված ծախսերը: Թեև, ընդհանուր առմամբ, ծառայությունների համար կատարված ծախսերի բաժնի նվազմանը (1997թ. երկրորդ

¹ Հայաստան. տնտեսական միտումներ, 1999, առաջին եռամսյակ, էջ 15:

² Հայաստան. տնտեսական միտումներ, 1999, առաջին եռամսյակ, էջ 16:

կիսամյակի 20.5 %-ի փոխարեն 1998թ. առաջին կիսամյակում՝ 18.6 տոկոս), ակներև է սպառված էլեկտրաէներգիայի համար վճարումների տեսակարար կշռի էական աճը (1998թ.՝ բնակարանային ծառայությունների 76 %-ը այն դեպքում, երբ 1996թ. և 1997թ. այն կազմել էր համապատասխանաբար 71% և 61.2%):

Այս իրավիճակն իր արտացոլումն է գտել սպառողական շուկայի կառուցվածքում (աղյուսակ 3). ցածր եկամուտները 1998թ. ընթացքում հանգեցրել են մանրածախ ապրանքաշրջանառության տեսակարար կշռի ընդլայնմանը (ինչպես անվանական, այնպես էլ իրական արտահայտությամբ) մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված վճարովի ծառայությունների ընդհանուր ծավալում: Այս միտումը հակադարձվել է միայն 1999թ. առաջին եռամսյակում՝ գլխավորապես առևտրի ոլորտում գների անկման (նախորդ տարվա նկատմամբ՝ 8%-ով) և ծառայությունների գների աճի հետևանքով:

Աղյուսակ 3

Սպառողական շուկայի ցուցանիշները (փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ, %)¹

	1997	1998	1999	1999				2000
				I. եռ.	II. եռ.	III. եռ.	IV. եռ.	I. եռ.
Փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ, %								
Մանրածախ ապրանքաշրջանառության և վճարովի ծառայությունների գումարը	6.3	6.8	5.6	4.5	7.4	10.7	1.9	7.2
Մանրածախ ապրանքաշրջանառություն	5.2	6.1	7.7	12.7	17.1	11.4	-1.5	7.4
Վճարովի ծառայություններ	9.9	8.5	1.0	-10.1	-9.1	9.1	11.1	6.7
Տեսակարար կշիռը, % ամբողջի մեջ (ընթացիկ գներով)								
Մանրածախ ապրանքաշրջանառության և վճարովի ծառայություններ	70.6	68.1	69.6	66.6	68.4	66.9	73.9	65.4
	29.4	31.9	30.4	33.4	31.6	33.1	26.1	34.6
Գների փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ, %								
Մանրածախ ապրանքաշրջանառության և վճարովի ծառայություններ	9.7	6.4	-2.6	-8.0	-4.5	0.3	-0.5	-3.4
	44.6	17.1	-3.3	2.8	-3.5	4.5	-12.9	3.0

Հանրապետությունում տնային տնտեսությունների դրամական եկամուտների, սպառողական ծախսերի կազմի և դրանց կառուցվածքի հետազոտությունը ցույց է տալիս, որ 1996-2005թթ. դրամական եկամուտների կազմում զգալիորեն բարձրացել է աշխատանքի վարձատրության բաժինը 1996թ.-ի 23 տոկոսից 2005թ.-ին հասնելով 60.7 տոկոսի: Նման երևույթը դրական է, քանի որ աշխատանքի վարձատրության միջոցով խրախուսվում են աշխատողները և փաստորեն վերականգնվել է աշխատանքի վարձատրության դերը հասարակական վերարտադրության գործում: Նշված ժամանակահատվածում ավելի քան երկու անգամ ավելացել է սոցիալական տրանսֆերտների բաժինը, իսկ եկամուտներ բոլոր տեսակի վաճառքներից և այլ դրամական մուտքերից հողվածների բաժինը 70 տոկոսից նվազել է կազմել է 25.2 տոկոս, ինչը կարելի է գնահատել որպես դրական միտում:

Տնային տնտեսությունների սպառողական ծախսերի վերլուծությունը ցույց է տալիս, որ բեն 1996-2005թթ.-ին պարենային ապրանքների (ներառյալ ծխախոտը) համար կատարված ծախսերի բաժինը 1996թ.-ի 53.5 տոկոսից 2003թ.-ին հասել է 72.8 տոկոսի, սակայն այն դրսևորել է նվազման միտում և 2005թ.-ին կազմել է 61.7 տոկոս (աղյուսակ 4):

Բնակչության սնանդամբերքի և ծխախոտի գնման ծախսերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պարենային ապրանքների կազմում 1999-2005թթ.-ին աննշան չափով ավելացել է սննդամբերքի բաժինը (0.3 կետով): Եթե 1999թ.-ին հացի և հացամբերքի բաժինը կազմել 33.2 տոկոս, ապա 2005թ.՝ 23.7 տոկոս, ինչը վկայում է բնակչության կենսամակարդակի բարձրացման մասին: Դա է ապացուցում նաև այն հանգամանքը, որ նշված ժամանակահատվածում 5.7 կետով ավելացել է մսի, թռչունի և ձկան համար կատարված ծախսերը, 2.6 տոկոսով՝ կաթնամբերքի և ձվի համար կատարված, ինչպես նաև 2.2 կետով ավելացել է մրգերի և բանջարեղենների համար կատարված ծախսերը²:

Բնակչության դրամական եկամուտների բաշխումն ըստ քվանտիլային խմբերի (աղյուսակ 5) ցույց է տալիս, որ եթե 1996թ.-ին առավել քիչ եկամուտներ ստացող բնակչության առաջին խմբին բաժին էր ընկնում դրամական եկամուտների 1.6 տոկոսը, իսկ առավել շատ եկամուտներ ստացող 5-րդ խմբին 63.2 տոկոսը (տարբերությունը 39.5 անգամ), ապա 2005թ.-ին այդ թվերը համապատասխանաբար կազմել են 6, 41 և (6.8 անգամ):

Բնակչության եկամուտների և ծախսերի բաշխումն ըստ ղեցիկային խմբերի (աղյուսակ 6) ուսումնասիրումը վկայում է, որ հանրապետությունում ամենահարուստ և ամենաաղքատ խմբերի միջև անհավասարությունը առավել մեծ է դրամական եկամուտների մասով, քան այդ անհավասարությունը 1996-2005թթ. զգալիորեն նվազել է: Այսպես, եթե I շնչի հաշվով առաջին խմբին բաժին ընկնող մեծությունը կազմել է 1996թ.-ին 0.3 տոկոս, ապա ամենահարուստ խմբինը՝ 46.2 տոկոս (տարբերությունը 152.7 անգամ), մինչդեռ 2005թ. այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 1.6, 28.4 և (17.71 անգամ): Մեկ շնչի հաշվով սպառողական ծախսերի վիճակը 1996թ. ունեցել է այսպիսի պատկեր. եթե ամենաաղքատ խմբի կողմից կատարվել է 2.1 տոկոսի ծախս, ապա ամենահարուստ խմբի կողմից 35.0 տոկոս (տարբերությունը 16.7 անգամ): Այդ ցուցանիշը 2005թ. կազմել է համապատասխանաբար 2.9, 28.5 և (9.8 անգամ): Ասվածը վկայում է, որ ՀՀ-ում դեռևս խոր անհամաչափություն գոյություն ունի, ինչպես I շնչի հաշվով դրամական եկամուտների, այնպես էլ սպառողական ծախսերի միջև: Ասվածը նշանակում է, որ պետության կողմից պետք է վարվի նպատակաուղղած սոցիալական քաղաքականություն հասարակության առավել թույլ պաշտպանված շերտերի կենսամակարդակը բարձրացնելու համար:

¹ Հայաստան. տնտեսական միտումներ, 2000, առաջին եռամսյակ, էջ 14:

² Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2006, էջ 94:

Տնային տնտեսությունների դրամական եկամուտների, սպառողական ծախսերի կազմը և դրանց կառուցվածքը^{1,2}

	1996	1999	2001	2002	2003	2004	2005
Բոլոր տնային տնտեսությունները միջինը մեկ շնչի հաշվով ամսական, դրամ							
Դրամական եկամուտները, ընդամենը	11968	7929	11217	9781	13324	14450	15949
այդ թվում՝							
աշխատանքի վարձատրություն	2787	2790	4748	5204	7355	8167	9680
սոցիալական տրամադրումներ	798	740	1062	1128	1321	1962	2253
եկամուտներ բոլոր տեսակի վաճառքներից	3358	2546	1799	726	1727	1632	1647
այլ դրամական մուտքեր	5025	1853	3608	2731	2921	2689	2369
Սպառողական ծախսեր	17658	11705	11949	11983	14404	19251	21139
այդ թվում՝							
պարենային ապրանքների վրա (ներառյալ ծխախոտը)	9455	8119	8448	8706	10487	11768	13053
ոչ պարենային ապրանքների վրա	3156	1760	1749	1618	2033	2787	3014
ծառայությունների վրա	5047	1826	1752	1659	1884	4696	5072
Ընդամենի նկատմամբ, %							
Դրամական եկամուտները, ընդամենը	100	100	100	100	100	100	100
այդ թվում՝							
աշխատանքի վարձատրություն	23	35	42	53	55.2	56.5	60.7
սոցիալական տրամադրումներ	7	9	10	12	9.9	13.6	14.1
եկամուտներ բոլոր տեսակի վաճառքներից	28	32	16	7	13.0	11.3	10.3
այլ դրամական մուտքեր	42	24	32	28	21.9	18.6	14.9
Սպառողական ծախսեր	100	100	100	100	100	100	100
այդ թվում՝							
պարենային ապրանքների վրա (ներառյալ ծխախոտը)	53.5	69.4	77	72.7	72.8	61.1	61.7
ոչ պարենային ապրանքների վրա	17.9	15.0	14.6	13.5	14.1	14.5	14.3
ծառայությունների վրա	28.6	15.6	14.7	13.8	13.1	24.4	24.0

Աղյուսակ 5

Բնակչության դրամական եկամուտների բաշխումը ըստ քվանտիլային խմբերի^{3,4} (%)

	1996	1999	2001	2002	2003	2004	2005
Դրամական եկամուտներ	100	100	100	100	100	100	100
այդ թվում՝ ըստ 20 % խմբի բնակչության առաջին (առավել քիչ եկամուտներով)	1.6	1.9	4	9	5	7	6
երկրորդ	5.6	6.0	9	14	11	12	13
երրորդ	10.3	11.1	12	17	15	16	17
չորրորդ	19.3	18.8	20	23	22	22	23
հինգերորդ (առավել շատ եկամուտներով)	63.2	62.2	55	37	47	43	41
Ընթացիկ եկամուտների համակենտրոնացված գործակիցը (Ջինի ինդեքսը)	0.602	0.593	0.535	0.451	0.438	0.413	0.360

Աղյուսակ 6

Բնակչության եկամուտների և ծախսերի բաշխումը ըստ դեցիլային խմբերի^{5,6} (%)

Դեցիլներ		Մեկ շնչի հաշվով սպառողական ծախսերը							Մեկ շնչի հաշվով դրամական եկամուտները						
		1996	1999	2001	2002	2003	2004	2005	1996	1999	2001	2002	2003	2004	2005
Ամենաաղքատ	I	2.1	3	3.4	3.2	4.2	3.0	2.9	0.3	0.4	1.5	1.7	1.8	1.6	1.6
	II	3.4	4	5.3	5.6	6.0	4.4	4.4	1.3	1.5	3.0	3.5	3.6	3.0	3.2
	III	4.3	5	6.5	6.3	6.6	5.4	5.5	2.3	2.5	3.4	4.3	4.9	4.2	4.5
	IV	5.2	6	7.2	7.4	7.7	6.4	6.4	3.3	3.5	5.1	5.5	5.7	5.5	5.8
	V	6.2	7	7.8	8.5	8.3	7.4	7.3	4.4	4.9	5.9	6.9	6.7	6.8	7.2
	VI	7.5	8	9.2	9.1	9.0	8.5	8.5	5.9	6.2	6.5	7.9	7.9	8.2	8.8
	VII	9.1	10	10.3	10.5	10.1	9.8	9.9	8.0	8.1	9.0	10.6	9.8	9.8	10.5
	VIII	11.5	12	11.0	12.2	11.7	11.8	11.8	11.3	10.7	10.6	12.7	12.7	12.3	13.0
	IX	15.7	16	13.8	14.2	14.0	14.9	14.8	17.4	16.0	15.6	16.2	15.3	16.3	17.0
Ամենահարուստ	X	35.0	29	25.5	23.0	22.4	28.4	28.5	45.8	46.2	39.4	30.7	31.6	32.3	28.4

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2006, էջ 92-93:

² Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2004, էջ 89-90:

³ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2006, էջ 90:

⁴ Հայաստան. տնտեսական միտումներ, 1999, առաջին եռամսյակ, էջ 93:

⁵ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2006, էջ 92:

⁶ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2004, էջ 95:

1999-2005թթ ընթացքում հանրապետությունում գրանցված բարձր տնտեսական աճի և նպատակային սոցիալական բաղադրականության արդյունքում գրեթե երկու անգամ կրճատվել է աղքատության մակարդակը՝ 56.1 տոկոսից մինչև 29.8 տոկոս: Այդ ընթացքում ծայրահեղ աղքատությունը կրճատվել է մոտ 4.6 անգամ՝ 21.տոկոսից հասնելով մինչև 4.6 տոկոսի: Էականորեն կրճատվել է նաև անհավասարությունը՝ եկամուտների համակենտրոնացման Ջինիի գործակիցը 0.597-ից հասնելով 0.359: Աղքատության հաղթահարման ընթացքն ու միտումները նշված են աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7

Աղքատության հաղթահարման նպատակային ցուցանիշները ՀՀ-ում¹

	1999	2005 ²	2010	2012
Աղքատության ընդհանուր մակարդակը (տոկոս)	56.1	29.8	13.6	11.2
այդ թվում՝				
բաղ. Երևան	58.4	23.9	8.2	6.4
այլ քաղաքներ	65.5	37.8	18.5	15.1
գյուղական բնակավայրեր	48.2	28.3	14.2	12.0
Ծայրահեղ աղքատության մակարդակը (տոկոս)	21.0	4.6	1.9	1.6
այդ թվում՝				
բաղ. Երևան	24.8	3.6	1.0	0.8
այլ քաղաքներ	27.4	7.2	2.8	2.3
գյուղական բնակավայրեր	14.1	3.2	1.9	1.7

¹ Աղյուսակում ներկայացված են 2005թ. փաստացի արդյունքները, հաշվի առնելով, որ 2006թ.-ի տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքները դեռևս հրապարակված չեն:

Ինչպես նշված է ՀՀ կառավարության ծրագրում, այդուհանդերձ, կառավարությունը բարձր է համարում 29.8 տոկոս աղքատության մակարդակը: Դրա էական կրճատումը դիտարկում է որպես իր գործունեության հիմնական նպատակներից մեկը: Կառավարությունը, համագործակցելով շահագրգիռ բոլոր կողմերի հետ, կշարունակի Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի վերանայման գործընթացը և 2007թ. կհաստատի 2008-2015թթ. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը՝ համարելով այն որպես պետության կայուն և անվտանգ զարգացման ռազմավարության կարևորագույն բաղադրիչ²:

Ելնելով նշված խնդրի կարևորությունից կառավարության գործունեությունից ակնկալվող հիմնական արդյունքներում նախատեսվում է՝

- համախառն ներքին արդյունքի տարեկան 8-10 տոկոս իրական աճ,
- ներդրումների տարեկան ծավալների առնվազն 10 տոկոս աճ,
- տարածքային տնտեսական անհամասնությունների էական նվազեցում,
- ոչ գյուղատնտեսական զբաղվածության 10 տոկոս աճ,
- պետական եկամուտների հավաքագրման մակարդակի աճ՝ տարեկան համախառն ներքին արդյունքի 0.3-0.4 տոկոսային կետի չափով,
- աղքատության էական հաղթահարում՝ արդյունքում ապահովելով 11.2 տոկոսից ցածր ընդհանուր աղքատության և 1.6 տոկոսից ցածր ծայրահեղ աղքատության մակարդակ,
- կենսաթոշակների մակարդակի ամենամյա բարձրացում՝ 2012թ.-ին աղքատության ընդհանուր գիծը 1.5 անգամ գերազանցող միջին կենսաթոշակի ապահովմամբ,
- սոցիալական ապահովության և ապահովագրության համակարգի ֆինանսավորման աճ՝ մինչև համախառն ներքին արդյունքի 6.2 տոկոսը,
- առողջապահության ոլորտին ուղղվող պետական ծախսերի ֆինանսավորման աճ՝ մինչև համախառն ներքին արդյունքի 2.2 տոկոսը,
- կրթության ոլորտին ուղղվող պետական ծախսերի ֆինանսավորման աճ՝ մինչև համախառն ներքին արդյունքի 3.5 տոկոսը³:

ՏԻՐԱՆՍԻԹԱՐԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոբանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտ ասպիրանտ

ՏԱՐԵՑՆԵՐԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՇՈՒՄԸ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԵԽԱՆԻՋՄԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Հաշմանդամների և տարեցների սոցիալական պաշտպանության հարցերը մեր պետության սոցիալական բաղադրականության բաղկացուցիչ մասն են: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչությունը մշակում և իրականացնում է հաշմանդամների և

¹ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, Եր., 2007, էջ 21:

² Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, Եր., 2007, էջ 22:

³ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, Եր., 2007, էջ 20: